ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2021թ. N 436-Ա

«ՌԻՆԴԻ ՆԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով «Ռինդի Նան» ՍՊ ընկերության տնօրենի դիմում-հայտը (մտից՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ի N 1650)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Ռինդի Նան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 27/7 հասցեում գտնվող շինության գազաֆիկացման՝ 41,0 գծամետր երկարությամբ խողովակներ անցկացնելու աշխատանքներ կատարելու շինարարության թույլտվություն:

2. «Ռինդի Նան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որպես համայնքի պատվերով ծառայություն մատուցող ընկերություն, ազատել տեղական վճար վճարելու պարտավորությունից:

3. «Ռինդի Նան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ շինարարական աշխատանքները կատարելիս տեղեկացնել «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:
4. Քանդված ասֆալտի հատվածները վերականգնել 25-օրյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ռինդի Նան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2021թ. N 437-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի բնակիչ, Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 72 հասցեում ինքնակամ շինություն կառուցած Արուհի Ալեքսանյանի՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու և համայնքի ղեկավարի կողմից գրավոր առաջարկությունն ընդունելու (չընդունելու) անհնարինության փաստով պայմանավորված կասեցնել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 16-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 17-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականությունը համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 114-Ա որոշման գործողությունը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքի ղեկավարի որոշման գործողությունը կասեցվում է մինչև Արուհի Ալեքսանյանի կողմից Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից ս/թ նոյեմբերի 12-ի N 1253 ելից-գրությամբ արված գրավոր առաջարկի ընդունումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 նոյեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2021թ. N 438-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արման Սամվելի Մարգարյանի դիմումները (մտից N 230՝ 29.01.2021 թ. և N 1655՝ 15.11. 2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ի N 05112021-10-0022 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 1/3 հասցեում գտնվող 29,24 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 32,5 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 32,5 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արման Սամվելի Մարգարյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:
4. Արման Սամվելի Մարգարյանը պարտավոր է վճարել՝
   1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝35750 (երեսունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ ավտոտնակի գինը.
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝ 26 350 (քսանվեց հազար երեք հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը.
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արման Սամվելի Մարգարյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Սամվելի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2021 նոյեմբերի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2021թ. N 439-Ա

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ձևակերպել սուբվենցիոն ծրագրի շրջանակներում կապալառու «Ջերմուկշին» Փակ Բաժնետիրական ընկերության կողմից հիմնանորոգված Ջերմուկ քաղաքի Մանկական Զարգացման Կենտրոնի (հասցեն՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամասն N 27/7) շահագործման թույլտվությունը:

2. Հաշվի առնելով, որ կառուցապատողը՝ «Ջերմուկշին» Փակ Բաժնետիրական ընկերությունը, շինարարական աշխատանքները կատարել է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում՝ Ջերմուկ համայնքի պատվերով, համայնքի ավագանուն առաջարկություն ներկայացնել շինարարության թույլտվությունների տրամադրման և շահագործման թույլտվությունների ձևակերպման համար սահմանված տեղական տուրքի և վճարի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2021 նոյեմբերի 17
Ջերմուկ